




1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցամսեայի բաժանորդագիրն է մէկ մեծիս անոց համար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկեշու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ժաւայն ու ձեռք, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանի վերջնախանայիս պիտի ճշդուին: — Մէկ թիւը՝ մէկ դահեկան է:
2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաթ օրերը:
3. Խմբագրութիւնս պատշաճորեայ չէ անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դրկուած ո՛ր է յօդուած:
4. Ստորագրեայ յօդուածոց պատասխանատւութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:
6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
7. Ծանուցեանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:

Գեր. Գեր. Վարդապետաց եւ Սիրեցեալ Ժողովրդեան
Ողջոյն եւ աստուածաւանդ Օրհնութիւն.

Սիրեցեալ Որդեա՛կք ի Բրիւսոս,

Երիցս երանեալ Ս. Բահանայապետի արժանութեամբ եւ շնորհիւ՝ մեր եկեղեցւոյ տարեգրոց մէջ չ'եստնուած եզական պայմաններու մէջ պիտի գումարենք յառաջիկայ Հոկտեմբեր 15. ին կիրակի օր. Ազգային Կաթողիկոսական Սինոդոս մը, որուն հրաւիրած ենք արդեն. մեր նուիրապետութեան քոյր Արհի. Արհի. Արքեպիսկոպոսներ. Եպիսկոպոսներ. Միաբանութեանց Աքքահայրեր եւ Լեօպոլսի հայ Արքեպիսկոպոսն եւ ուրիշներ: Եզական պայմաններու մէջ ըսինք. որովհետեւ Հոովմայ Մեր Կրօնի կեդրոնին մէջ, ուր եղին զվեմն հաւատոյ հիման Սուրբ Եկեղեցւոյ. Բրիւսոսի Փոխանորդին հովանւոյն տակ, այնքան մարտիրոսաց եւ մանաւանդ Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի շիրիմներուն մօտ, Արեւմտեան եկեղեցւոյ հոյակապ նուիրապետութեան, Եւրոպիոյ Բաղաւաթիւր Ուղղափառ ազգաց աշխիւ սուրբ ճշմարիտ հայ եկեղեցւոյ, Լուսաւորչայ հարազատ ու հաւատարմ որդւոց, Կաթողիկէ հայ նուիրապետութեան ներկայացուցիչ պիտի գումարուին հայ ծիսի շէնորդութեամբ կատարելու ամենահանդիսաւոր, ամենանուիրական գործ մը, Ազգային համագումար Սինոդոս մը:

Բայց այդ գործոյն շէնորդութենէ աւելի, մեր եկեղեցւոյ եւ Հասարակութեան բազմադիմի պէտքերն են որ Անոր կարեւորութիւնը կ'աւելցնեն ու անպայման պատշաճութիւն կ'ընծայեն: Վասն զի ստիպող պէտքերու պատշաճագոյն դարման չի կրնար գտնուիլ քան լոյն ինքն թժշկութեան ակնադրիւրէն. եւ մեր ակնադրիւրն է Հոովմայ պաշտօնի Գահն, որուն կառչելով միայն կարելի է ապահովել Կրօնք եւ Եկեղեցի, հետեւաբար եւ հոգւոց փրկութիւն:

Ուստի Սիրեցեալ Որդեակի, կը հրաշխեմք զձեզ այս առ-
թիւ նախ՝ երախտապարտ հոգւով մաղթանքներ վերադառնել առ
Բարձրեայն Աստուած՝ մեր հայրախնաւ Քահանայապետին Պիո-
սի Ժ. Ի Ս. Հօր բարօրութեան ու արեւշատութեան համար որ իր
հայրական գթառաստութեամբ առ մեզ՝ բոլորովին ուզեց զեղույ
եւ յորդել ու շնորհել Հայ Կաթողիկէ եկեղեցւոյս այս փառա-
շուք պատեհութիւնը: Երկրորդ՝ կը յանձնարարեմք անդադար ու
մասնաւոր եռանդեամբ աղօթել, որ Սուրբ Հոգին յոյս տայ Սի-
նոդական Հարց, որ հասարակութեան օգտակար եւ եկեղեցւոյ
պայծառութեան՝ յարմար որոշողութիւններ եւ կարգադրութիւն-
ներ սահմանեն, որոնցմէ անշուշտ կախում պիտի ունենայ մե-
ծաւ մասամբ մեր ամէն ձեռնարկներուն եւ ձեր աշակնկա-
լութեանց յաջողութիւնը: Աղօթեցէք, Սիրեցեալ Որդեակի, որ խա-
ղաղութեանց տուողն Աստուած խոնավութիւնները ցածուցանէ,
առապարկները հարթէ. խոյնդոսները վերցնէ, ու դիւրացնէ եկե-
ղեցւոյ փրկաւէտ գործն մեր հասարակութեան մէջ:

Ահա այս նպատակաւ կը յանձնարարեմք որ հոկտեմբերի
15. էն սկսելով, ամէն օր աղօթէք մեր դիման համար, Յիսուսի
Ամենասուրբ Սրբի եւ անկէ դուրս վազող Աստուծային ար-
եան: Այս Սինոդի միջոցին Սուրբ Պաւարագներ տեսնէք, ջերմե-
ռանդութեամբ Ամենասուրբ Հաղորդութեան այցելութիւններ
ընէք, հաղորդուիք յաճախ, Սուրբ վարդաւանի աղօթքն ընէք. մա-
նաւանդ պզտիկ տղայոց մաղթանքներ ընել տաք: Կը պատահեմք
որ ամէն եկեղեցիներու մէջ որոշեալ ժամուն մասնաւոր զան-
գակաւ ժողովուրդ հրաշխելով սեպ անգամ, եւ ի մասնաւորի
կիրակի եւ տօնի օրեր Սրբութիւն ի բազմոցի դրուի, մեծէն մին-
ջեւ պզտիկ Անարատ Յղացեալ կուսին բարեխօսութեան դիմեն. Ս.
Յովսէփայ Աստուածածոր, Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պո-
ղոսի եւ Գրիգորի Լուսաւորչի Սրբոյ Հօրն մերոյ եւ հայաստան-
եայց եկեղեցւոյ ամենայն պաշտպան Սրբոց միջնորդութիւնը
խնդրեն եւ առաւմին պաղատանքներ ըլլան ամեն տեղ առ Տէրն
ողորմոնքեանց, որպէս զի վերջապէս մեմք աշուրիշ Կաթողիկէ
ազգերու պէս նորոգութիւն, շինութիւն եւ կազմութիւն այն բարե-
շէն կարգաւորութեամբ որ միայն Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ կը
գտնուի. այն կենսասու ճշմարտութեամբ որ միայն Կաթողիկէ
եկեղեցւոյ մէջ կը պահուի, այն անմոլար Հաւաստի սկզբունքնե-
րով որոնց աւանդապահ է միայն Կաթողիկէ եկեղեցին:

Աղօթեցէ՛ք, Սիրեցեալ Որդեակի, եւ վստահ եղե՛ք՝ թէ քարե-
խնամողն Ասուած որ գիտէ « զպէսս մեր եւ զկարիս առաւել
քան զոր խնդրեմք եւ իմանամք » անշուշտ պիտի վարձատրէ Ձեր
հաւաստն, յաջողելով Նախապետութեան ձեռնարկը ի փառս իւր
եւ ի քարգաւաճանս Սուրբ Եկեղեցւոյ. Ամէն:

Այդ յուսով կ'օրհնենք ուրոյն ուրոյն զամենեւի յանձնելով
զձեզ Ամենասուրբ Սրբին Յիսուսի եւ Անարատ Յղացեալ Տիրա-
մօր Սուրբ Կուսին:

Եւ եմք հաւաստեօք սիրոյ հոգեւոր Որդեկացդ.

Աղօթարար

✠ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐԶԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻՂԻԿԻՈՅ

Յ. Գ. Կը Խնդրուի որ այս Շրջաքերական կարդացուի մեր
ամեն եկեղեցիներու մէջ:

Նոյն.



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՅԱԲԱՐՆԵՐԸ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Առաջին Տարի	9 Սեպտեմբեր 1911	Թիւ 12.
-------------	------------------	---------

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ԴԻՏՈՂ

Բ. Հնար է սակայն, ո՛վ Դիտող, որ կրկնել ուզես՝ ինչպէս ստէպ ըրած ես յօդուածիդ մէջ, և ինչպէս առհասարակ յանկերդ ըրած են հակառակորդներն, թէ՛ « Մենք անկեղծ Կաթողիկէայք ենք, հպատակ Սրբոյ Գահաւն »: — Բարի՛, շա՛տ բարի. ամենուն համար ալ ասկէ աւելի բաղձալի բան չկրնար ըլլալ: Ամէնքնիս ասոր կ'աշխատինք: Իրա՛ւ է. ինչպէս կրնան մոռցուիլ՝ Կաթողիկէ դաւանութիւնը անեղծ պահելու համար, հաւրիւրաւոր տարիներով քաջութիւնը նեղութիւններն, աքսորը, հալածանքը, թափուած արիւնը, ընչից կորուստը: Սակայն առակ մը կ'ըսէ. « Ընդ բան և ընդ գործ՝ բազում է խարոց. — Dal detto al fatto, corre gran tratto »: Եւ Ս. Գրքին մէջ շատ տեղ գրուած կայ որ անունը միայն ոյժ մը չունի. « Իրենք զիրենք իմաստուն կը կարծէին, յիմարեցան » (Հռ. Ա. 22). « Կը հայհոյէին՝ իրենք զիրենք Հրեայ ըսելով, և բան մը չէին » (Յայտ. ք. 9.). « Կենդանիի անուն ունիս ու մեռած ես » անդ. Գ. 2.): Մեր ի վեր անդր յիշած շարունակեալ գործերն միայն բուսականէ

աւելի են այս անգագար կրկնուած խօսքին արժէքը կորսցնելու և նոյն իսկ կարեւորութենէ զրկելու. մանաւանդ եթէ ծրագրին ամբողջական ոգին միանգամայն ի նկատի առնուի: Իսկ ինչ ըսելու է երբ վառ գոյներով մեր աչաց առջև նկարենք սպօրինի արարքներուն ամբողջութիւնը: Ճշմարիտ և անկեղծ Կաթողիկէ՞ են անոնք որ իրենց Օրինաւոր Հովիւը կ'ուրանան, և՛ մինչ նա ճանչցուած ու պատուուած է Ս. Գահէն, անոր հրաժարեցումը կը պահանջեն աշխարհական ժողովներու մէջ, հակակաթողիկեայ թերթերու մէջ, նոյն իսկ կաթողիկէի գիմակին ներքեւ ծածկուած օրաթերթերու կիրքերն կը թափեն իրենց բոլոր դառնութիւնը, ամենապարսաւելի ոճերով, ժողովրդեան գրգռութիւններով, ամեն կերպ նախատալից յորջորջումներով. այս է ուրեմն ճշմարիտ կաթողիկէութիւնը: Ճշմարիտ և անկեղծ Կաթողիկէ՞ են անոնք՝ որ Հայրապետական Կանդակ մը, որ հոգեւորական իշխանութեան պարզ արտայայտութիւնն է, կը մերժեն, և կազմակերպուող ամբօխիւ կը խափանեն անոր նոյն իսկ եկեղեցեաց բեմէն կարգացուիլը, և հոն կը յարձակին քահանայից վրայ, կը խլեն զայն անոնց ձեռքէն, կը պատուեն, կ'այրեն. եկեղեցեաց բակերուն մէջ կը ճառախօսեն ընդդէմ հոգեւոր իշխանութեան. գործեր՝ որոնց համար Սրբազան Քահանայապետը յայտնապէս նշովքներ սահմաներ են տուել վճռոյ. այս է ուրեմն ճշմարիտ Կաթողիկէութիւնը: Ճշմարիտ և անկեղծ Կաթողիկէ՞ են անոնք՝ որ կը կանգնին իբր իսկապոռ իրենց Օրինաւոր Հովիւին, անոր հոգեւոր իշխանութիւնը կը յափշտակեն (usurper), և իշխանաբար անոր Հովուականին դէմ Յայտարարութիւն մը կը խմբագրեն, կը տպեն, կը ցրուեն՝ հաւատացեալները գրգռելով, սողորելով ու գայթակղեցնելով, և գիտէք անշուշտ թէ այդպիսեաց համար եկեղեցական սրբազան Կանոնք անաղիւսնէր սահմաներ են. այս է ուրեմն ճշմարիտ Կաթողիկէութիւնը: Թող և այլ սպօրինի արարք, գոռում գոչումը, անուանարկութիւնները, հրատարակութիւնները, որոնք ո՛ր և է իշխանութեան դէմ բնաւ ներելի պիտի չըլլային: Արդեօք կրնա՞ւ քաջութիւնն ունենալ շարունակելու գայապիտիները ճշմարիտ և անկեղծ Կաթողիկեայ անուանելու. չեմ կարծեր. բայց եթէ դու անուանես, Սրբազան Քահանայապետ մը ո՛չ: Ան կուտայ պատշատ պատասխանը, « Առ ոմանս պանծացեալս յանձինս թէ արգարք իցեն՝ և խոտիցին զբազումս » (Ղուկ. ԺԲ. 9.) մտիկ ըրէ՛ ինչ կ'ըսէ ժամանակին մեզի համար տրուած և արժանապէս յիշատակաց արժանի և ստէպ յիշուած Քահանայապետական Կանդակը. — « Խափանիչ եղան այնպիսեաց խաբէական արուեստները, որոնք իրենք զիրենք ուղղափառ կ'անուանեն, բայց իրօք Քրիստոսի խաչին թըշ-

նամիններն են: — Գլխաւոր խարէութիւնը որ նոր հերձուածը պատրուակելու կը գործածուի, Կաթողիկէայ սնունն է, զորն որ նոյն հերձուածոյն գտիչներն ու հետեւողները՝ թէև Մեր իշխանութեամբք և Մեր դատաստանաւը դատապարտուած ըլլան, կը յանգանին գործածել... Այսպիսեաց համար Ս. Յերոնիմոս կ'ըսէ ի մէջ այլոց. « Սուրբ էն ըսել. Այն իմաստոց որքին եւս մեկտ' որ է սիլբանէ Առաքելական Վարդապետութիւնը մեզի առաջած էն... և ապրաւորանէ Գրոց Բիտութիւնը՝ աշխարհային իմաստութեան հետ մեկտեմայն առնին »: ... Ուստի եթէ չենք ուզեր հեռանալ Եկեղեցւոյ հաստատունն ու մշտնջենաւոր աւանդութենէն, որ Հարց լուսաւոր վկայութիւններովը հաստատուած է, Նոր — Հերձուածողք թէպէտ և իրենք զիրենք բերնով կաթողիկէայ քարոզեն, իրօք այնպէս ըլլալուն վրայ իրենք զիրենք ամենին չեն կրնար համոզել: ... Պէտք է որ Քահանայապետին դատաստանաւն որոշուի թէ որո՞նք կաթողիկէայ են՝ և որո՞նք չեն » Quart. թիւք 4, 6 և 15.): Եւ ո՛վ Դիտող, ինչ ըսած է Քահանայապետը... դատապարտեց ծրագիրը, և այս ապօրինի արարքները շարունակողներուն համար ստուգապէս գիտեմ որ « Հարիւրին իննսուն հերձուածող են » ըստ: Եւ հաւատա որ ազգեցութեան ներքեւ չէր. Եկեղեցւոյ անկախ անվախ Գլուխը կ'արհամարհէ ամեն մարդկեղէն ազգեցութիւն, ի հնուց սովորութիւն է մոլորելոց՝ կարծել կամ լաւ ևս կարծեցնել ուզել թէ Ս. Քահանայապետը կը խաբեն: Նոյն իսկ հիմա ըսողներ և գրողներ ալ կան որ՝ « Գոտը անլուտըլըշա կէօրէ ֆէթվա վէրիլ » . և այսպէսով, Յանէսեան ոճով, կ'անարգեն զՍրբ. Քահանայապետը: Այո՛. անճիշտ և քմածին խարդախութիւն է այդ՝ յամառութիւնը պարտկելու համար: Կը բողոքեն նաև « Գէշ կամ սխալ տեղեկութիւն առած Քահանայապետէն՝ առ լաւ տեղեկութիւն առած Քահանայապետն. — A Papa male informato, ad Papam bene informatum »: Ասոնք բոլոր չարոսենք մեքենայութիւն կամ սին մխլթարութիւն են որ կը ճգնին խիզճը քննելու, բայց չեն կրնար մոռցնել: Սրբազան Քահանայապետը ինքնովին կ'ուսումնասիրէ խնդիրները և ապա կուտայ վճիռք: Նա այսպէս կը կառավարէ 300 միլիոն կաթողիկէներն տիեզերաց՝ իր անսխալ և հոգեշունչ վարդապետութեամբ: Տեսաւ, ուսումնասիրեց և ապա դատապարտեց այդ մոլոր Մրագիրը: Ընդ հակառակն՝ ծրագրին պաշտպաններն մեծ կոսկածներ տուին իրենց անկեղծութեան: Ամէն ոք հետաքրքիր է իմանալու թէ իրենց անկեղծ կաթողիկէութիւնը և գաւթին արդարութիւնը ցոյց տալու համար Սրբազան Քահանայապետին գրելիք աղերձագիրը — զոր բարձր ոճով կամ այլաբանօրէն memoran-

dum կը կոչեն իրենք, — զոր սրուշեցին ՉՈՐՍ ամիսէ ի վեր, խմբագրեցին, թարգմանեցին, ինչու՞ ցարդ չըրկեցին. ահա ա՛յն պիտի պարզէր լուծէր խնդիրը. մոայլ իմացուածները կամ երկդիմի տեղեկատուութիւնները — եթէ երբեք եղան — պիտի փարատէր, լուսաւորէր. ինչու՞ չըրկեցին. այս ինչ՞ առեղծուած... արդեօք վա՛խ, արդեօք նախազգացու՞մ, արդեօք վարանք՝ որ գիմելը այն իշխանութեան կառարեալ ճանաչողութիւն է, և վճիռը չընդունենը՝ հերետիկոսութիւն բացայայտ. կամ արդեօք անկեղծ կաթողիկէներուն աչքերուն փոշի նետե՞լ սեւեցին, անոնց ցոյց տալ ուզելով որ իրենք արգասի դատի մը գլուխ կը գտնուին որ մինչև Քահանայապետի մը կը գիմեն, և... չըխմեցին: Տակաւին պիտի դիմեն՝ արդեօք. Ով՞ գիտէ. բայց յամենայն դէպս իրողութիւնը զարմանալի և միտնդամայն անմեկնելի կը մնայ:

Գ. Հասածներուդ առելի զօրութիւն մը տալու համար պանծանօք կը
յաւելուս թէ՛ « Հասարակութեան մէկ մասը չէ, այլ ամբողջ Հասարա-
կութիւնը, թէ՛ ի Պօլիս և թէ ի Գաւառ » : Ասիկա անձնապաշտպա-
նութեան մէկ հինցած եղանակն է, իւր կուսակցութիւնը ստուարութիւ
ցունելու աշխատիլ։ Բայց ճշմարտութիւնն ու արդարութիւնը մարդոց
թուէն կոխում չունին։ Շատ սխալ հասկացած առականերէն մին է և այս .
« Ձայն ժողովրդեան ձայն Աստուծոյ » . սա՝ միայն ան ատեն ճշմարիտ է,
երբ ամեն յեղ և ամեն ժամանակ ստուգուի, մանաւանդ երբ նիւթը և ա-
ռարկայն արդար է, աստուածային կամ բնական կամ եկեղեցական օրինաց
հակառակ չէ . ապա թէ ոչ ոճրագործ ստած մը կը դառնար։ Թէ կ'ուզես ,
ամէն ժողովուրդք միանան գողութիւնը կամ սուտը ևն . փառաբանելու ,
այս միաբանութիւնը բնաւ չգօրեր գործը բարոյացնելու։ Ուստի եթէ նըշ-
մարտապէս ամբողջ հայ կաթողիկէ Հասարակութիւնը միանար այնքան ա-
ւաղելի և հոկաւետարանական ապօրինութիւններու , այս միաբանութիւնը
բնաւ իրաւունքի ոյժ մը չէր ունենար , և փոխանակ քանի մը հոգւոյ , ա-
մենը միանգամայն կ'ըլլային դատապարտելի և կ'ըսուէր . « Ահե՜հե՜հե՜ խ-
տրեցան , է մե՜նի աղէփանցան . Ո՛րո՞ք որ առնէ շքարէ , և զե՞ր մնալ է մէ՛ » :
Ողբալին այն կ'ըլլար միայն որ Աստուծոյ անէծքը — որ՝ աւա՛ղ , մեր
վրայ յերաւի ծանրացած է , — ընդհանրութեան կը տարածուէր , ըստ այն
երկիւղատաառ բանից Առաքելոյն . « Մէ՛ հպրեալեալ , այլ վե՛ցէ՛ր . քոցէ եր-
բէ և զեւէ լեւոյն Աստուծոյ . Դե՛ Աստուծոյ աստիճանն իրծանելոց վրայ . եթէ
էր Կոյր-Նիւնը Կոյր-Սահման , զեւէ և իւրէ մեկէ իւրէ » (Հո . Ժա .) . « Այն
մէն աս . Ըստ Յե՛ոս , որ յե՛ և , Կոյր-Սահման , Կոյր-Սահման » (Ծով .

ժե. 2.) : « Վսիմանս այսոհեպե, կ'ըսէ առաքելալը, Կանչի Աստուծոյ խօսքը ԼՍԱՅԻ ԸՂԱՐԸ Բնա- ղօքնէց անոնց, Կանչի որ կը հետաքէին հաւատքի ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԵՎ. . . ԶԻՅՆ Եղէ, Գոսցէ հրաշարիտ անկէ որ խօսեցաւ . . . պէտք Բանկելով շնորհքը, պաշտեցէ՛ք ՂԱՍԿԱՆԻՆՈՒԹԵԱՆ Կանչի և Դոգմա-Բեմք » (Եբր. դ. և ժբ.) : Քրիստոսի սուշն ինչ նշանակութիւն ունի Հասարակութիւն մը, մինչդեռ ամբողջ ժողովուրդներ իրեն համար « Էբե- Կանչի Ե Դոգմա » են : Մի և նոյն երկիւղը չարտայայտեցին Բարթոլոմայի Եպիսկոպոսունք իրենց միլիոնաւոր ժողովրդոց համար : Աստուած անհաւատարիմ ազգեր կը դատապարտէ ի կորուստ, և քարերէն կրնայ Աբրահամու զաւակներ յարուցանել : Յանձնապատասխան, օրինազանց և անուզող կաթողիկէ ժողովուրդներ կ'անիծէ ու կը մատնէ ի կործանումն, և Սահարայի անապատներուն մէջ կը ծիւցնէ կը շէնցնէ Սուրբ Հաւատոյ երկնառաք բոյսը : Առաքեալները կը թօթափեն իրենց ստից փոշին և կը դառնան ի Հիթանոսս, և Կաթառնառումն անիծապարտ մինչև ի դժոխս կ'իջնէ : Ասոր համար է որ Պօղոս Առաքեալ, անօթն ընտրութեան, կը յորդորէր հաւատացեալները. « Ամէն Բանկ Ե՛ղ ՀՆԱԶԱՆԴԵԾԷՔ. անչև և Դոգմա-Բեմք յեք Էբե-Բեմա աշխարհէ՛ք » (Փիլ. ք. 12.) :

Ասանք կատարեալապէս ստոյգ ըլլալով հանդերձ, ո՛վ Դիտող, բնաւ ճշմարիտ չէ սակայն որ շեղած ըլլայ անքողը Հասարակութիւնը, ինչպէս ցոյց տալ կը ճգնիս : — Եւ բարեբաղտարար : Ասանք կուսակցական արգահատելի չափազանցութիւններ են : Երբ Եղիա կը գանգատէր թէ քու բոլոր մարգարէներդ ջարդեցին, ո՛վ Տէր. ես միայն մնացի, և զիս ալ կ'ուզեն սպաննել. պատասխանեց Աստուած : Պահեցի ինծի, կ'ըսէ, եօթն հազար մարդ, որք ծունր չկրկնեցին Բահադու. և կը յաւելու Առաքեալը. « Նոյնպէս և յայտ ժամանակի ծնացորդ ըստ ընտրութեան շնորհաց Եղին » (Հոով. ժա. 2-5) : Զախջախիչ մեծամասնութիւնը արդարութեան և իրաւանց կողմն է, չնորհօքն Աստուծոյ. և ստանք են կաթողիկէութեան սիրոյն համար չարչարուած, աքսորուած, մարտիրոսացած հարց թողները, « ի Պօլիա և ի գաւառս » . և գիտնալու է որ հիմա այն կուսակցութեան կողմը կարծողներէն շատերը, մինչև իսկ գործօններէն (militant), պիտի գան փութով ի զգաստութիւն, քանզի տգիտութեամբ կեցած են : Ամէնքը պտուղի կտորի մը համար Դրախտը չին ծախեր : Ազգը սիրելի է. ազգայնութիւնը ցանկալի . քանզի « ոսկր յոսկերաց և մարմին ի մարմնոյ եմք » . բայց հողի առաւել է և կրօնք թանկագին . սիրելի է ազգ, բայց սիրելաւորն է ճշմարտութիւնը . քանզի ճշմարտութիւնը Քրիստոս է : Պէտք է ուրեմն գիտնաս որ շատ գաւառներ բնաւ չխլրտեցան, այլ ըստ պարտուց մնացին ի կատարեալ հնազանդութեան իրենց Օրինաւոր Հովուապետին :

Խնչպէս ուրիշ կերպ կրնային ընել, երբ մտածէին Քրիստոսի ու Եկեղեցւոյ հրամաններուն վրայ, անսալով նաեւ իրենց ուղղամիտ Եպիսկոպոսաց և առաքելական քահանայից սրբանուէր խրատներուն: Իսկ այն տեղեր ուսկից գրութիւններ հասան իբրեւ թէ ձայնակցութեան, և հրատարակուցան կուսակցամիտ և սնխիղճ թերթերու մէջ, դարձեալ ջախջախիչ մեծամասնութիւնը անդրդուելի կեցած է ճշմարտութեան և պարտաճանաչութեան պողոտային վրայ, անշեղ և անվրդով. իսկ սակաւութիւ սայթաքողներուն ոմանք կա՛ն որ խարուած են, եթէ կարդայի՛ն անգամ մը այդ մուրական ծրագիրը, կամ վերոյիշեալ « Տեսութիւնը Կանոնադրի նոր ծրագրի վրայ », պիտի պակչէին խորչէին անկէ. սմանք ևս կա՛ն, որոնք միշտ անտարբեր եղած են, բնաւ չեն կատարած իրենց հոգևոր պարտքերը, միշտ՝ քիչ թէ շատ խռովարար և անհնազաղ և քննադատ եղած են: Իսկ մնացեալ մասը անկրօն դաշնակցականաց յարեալ, ցաւովի մնացորդ: Բայց կարծեմ պիտի զարմանաս երբ հաւատտեմ քեզ թէ գլխաւոր գրգիռը տառապանքները, գրութիւնները շարագրողները, աղմուկներն հանողները, գործօնները, եղան նոյն լնքն հայ էջմիածնական Դաշնակցականներ կամ մեր Հասարակութեան չպատկանողներ. սրբ աղաղակեցին. « Մե՛ք բէրե՛ք շէպըն աշխատե՛ք ե՛րբ »: « Եթէ շէք շարագրե՛ք, ապա ոչ ճարե՛ք շէք »: « Ըստ մերոյ օրենաց պարտք մե՛քն էլ »: « Եթէ շէք աշխատե՛ք, ինչ Բարեկամ » աղգիւնք « Գրա՛տ շէք ինչպէ՛ք շարագրե՛ք մեր »: « Խռովե՛ք շարագրե՛ք »: « և ստիպէին մեծաձայն և զօրանային բարբառքն նոցա. « Բա՛նք է մե՛ք, Բա՛նք է մե՛ք, և հա՛նք շէք ինչ »: Եթէ անպատճառ բաղձաս, իրենց անունովը, տեղն ի տեղ, կարող եմ մատնանշել քեզ. անոնք որ կ'աճեն կաթողիկէութիւնը և այնմ կը գերադասեն ո՛ր և է այլ կրօնք կամ անկրօնութիւն, անոնք որ իրենց Եկեղեցին ալ կործանելու աշխատելով, կը փափագին ջնջել կաթողիկէութիւնը. անոնք որ խօսքով, գրիչով և գործքով կ'ուզեն ապստամբեցնել և վարատել կաթողիկէ հօտը. անոնք որ եթէ կարենային պիտի չվարանէին չթերանային գոյն նաեւ նիւթապէս հալածելու, հարազատ որդիք հարց՝ սրբ գարեւրվ հալածեցին, տհա ուրպիսի են աղաղակները, շարժառիթները, քարածիգները. և վայ՛ անոնց որ այսպիսեաց հետ կը միաբանին ի կործանումն Ս. Կրօնիս, յայսին կատականաց սրբազան և աստուածաբանով մեր Հայրապետին և նուիրական Կանոնաց Եկեղեցւոյս:

(Շարունակելի)

Կարողիկէ

ԲՈՐԹՈՒԳԱԼԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԲՈՂՈՔԸ

(Շատունակութիւն եւ վերջ)

Մայիս 24 թուականն ալ բօրթուգալի համար յիշատակաց արժանի օր մը եղաւ։ Տիեզերական Եկեղեցւոյ հանճարաշատ, արթուն եւ գերզգօն Դուռ խըն, եւ Յիսուսի Քրիստոսի Փոխանորդն Պիոս Ժ. Սրբազան Պապն Iamdu-dum հռչակաւոր Շաջարեական Կանգալը կուտար։ Անոր մէջ Սրբազան Քահանայապետն դառնակսկիծ շեշտերով կ'ողբայ՝ իբրեւ գորովագութ հայր մը իւր զաւակաց չարագոյժ աղէտից վրայ։ Կ'ողբայ եկեղեցւոյ թշնամեաց անարդարանալի կուրութիւնը, եւ Բորթուգալի վարիչներուն անզգամ յաւակնութիւնը, որք Կաթողիկէութեան կը փորձեն հասցնել մահահրուէր վնասներ։ Քաղաքացիական բարեկարգութիւնը խանգարել, կրօնական ո՛ր եւ է դրոշմն եւ հետք քաղաքացիական կեանքի պայմանէն բնաջինջ ընել, երդման, տօներու, ամուսնութեանց, քրիստոնէական վարդապետութեան ուսուցման սրբազնասուրբ ամէն կանոնները բովանդակ կարգ ու սարքը յեղաշրջել վեր ի վայր ընել։ Սրբ. Հայրն դառն գանգատանօք ի վեր կը հանէ բացայայտ անիրաւութիւնը քաժանկան օրէնքին, աննախընթաց չարութեամբ ու ժպրհութեամբ գործուած, իր բոլոր անհեղեղ ու վայրագ հետեւութիւններով, որ ոչ այլ ինչ նպատակակէտ կը դիտէ եթէ ոչ սուրբ կրօնքի ջնջումը՝ ընդ վայրավաստակ սրբապղծութիւն։ Անաչառ եւ արդարադատ քննադատութեան բովէն կ'անցունէ այս օրէնքներն մի առ մի եւ անվերապահ խտրութեամբ կը կշտամբէ կը խարազանէ մէն միոյն յատկանշական խելացնոր անզգամութիւնը։ Հուսկ ապա քրիստոսաւանդ իշխանական ճոխութեամբ եւ անդեղեւուն հաստատամտութեամբ, այսպէս կը շարունակէ վիհաբարբառ Հովուապետը։

« Արդ, Մեր Առաքելական պաշտօնին գիտակցութեամբն յորդորուելով ու մղուելով, որպէս զի Աստուծոյ թշնամիներուն այսքան դժնդակութեան ու յաւակնոտութեան դէմ՝ Կրօնից արժանապատուութիւնը եւ յարգը ամենայն հսկողութեամբ սլաշտպանենք, եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ սրբազնասուրբ իրաւունքները պահպանենք, Մենք՝ Լուսիտանեան Հանրապետութիւնը ու Եկեղեցին բաժնող օրէնքը, որ զԱստուած կ'արհամարկէ, ու Կաթողիկէ դաւանութիւնը կ'անարգէ ու կը մերժէ. որ բնութեան ու ազգաց իրաւունքները բռնաբարելով, Բորթուգալի եւ Ս. Աթոռոյ միջեւ հանդիսաւորապէս փոխանակուած դաշնագրութիւնները կը խզէ կը խաբտակէ. որ

զեկեղեցին իւր գոյքերուն ամենաարդար ստացումէն կը զրկէ կը մերկայնէ . Եկեղեցւոյ ազատութիւնն իսկ կը յափշտակէ և անոր առտուածային կազմակերպութիւնը կը յեղաշրջէ . որ վերջապէս հռովմէական Քահանայապետութեան մեծվայելչութիւնը, եպիսկոպոսական նախնապետութիւնը, Բորթուգալի կղերն ու ժողովուրդը և հետեւաբար բովանդակ աշխարհի կաթողիկէները կը թշնամանէ ու կը նախատէ, Մեր առաքելական Իշխանութեամբ կը գոյրովնը, կը դատապարտենք, կը մերժենք: Եւ այսպիսի օրէնքի մը դրուելուն, սահամանուելուն, հրատարակուելուն դէմ ուժգնապէս գանգատ բառնարով, եւ անոր հեղինակներուն ու մասնակիցներուն դէմ հանդիսաւորապէս բողոքելով, անոր մէջ Եկեղեցւոյ անբաժնարարելի իրաւանց դէմ ինչ որ կարգադրուած է, կը վճռենք և կը հրատարակենք թէ ոչինչ և ընդունայն է եւ այնպէս համարելի »:

Ի վերջոյ՝ Սրբ. Քահանայապետը կը կրկնէ իւր մեծ արտմութիւնը՝ Կրօնքին դէմ մղուած այս պայքարին համար: Դարձեալ ջերմաջերմ կոչ մը կ'ընէ Եպիսկոպոսաց ու Կղերին եռանդեան ու առաքինութեան, որք սքանչելապէս կը ձայնակցին, ասով կը սփոփի իւր հայրական սիրտն, այս է իւր յաւայ անվկանդ նշոյլը: Անոնք ո՛չ թէ անձնական զիւրակեցութեան, այլ պաշտօնին և արժանապատուութեան համար ազատօրէն մերժեցին այդ օրէնքը, անվկանդ միաբանութեամբ ձայն բարձրացուցին՝ նախընտրելով Եկեղեցւոյ սուրբ ազատութեան ոգի ի բռին պաշտպան կալ, նոյն իսկ իրենց ամէն սնեցածը կորսնցնելու և հալածուելու վտանգով. չզիջան խտտելի օրապահիկի համար վատարար գաշնադրել. թշնամեաց ո՛չ դուռնն ո՛չ բռնութիւնք պիտի չկորենան քեցել անոնց միութիւնն Հռոմոյ Քահանայապետին հետ: Ընդհանուր Եկեղեցւոյ առջև անոնց ի հանդէս զբաժ պերճափայլ առաքինութեանց՝ անխախտ հաւատոյ, անյողդողդ մտոց և մեծահոգի վեհութեան յաշարար յիշատակը, պիտի ըլլայ՝ բարիներու ցնծութիւն, իրենց պատիւ, և բազմաչարչար Լուսիտանիոյ գրգիռ բարեյօժար: Անտի Կրօնից պաշտպանութիւն և հայրենեաց փրկութիւն:

« Տեսէ՛ք սակայն և մլտ գրէ՛ք, որ դուք ձեր մէջ, և քրիստոնեայ ժողովուրդն ձեզի հետ, և ամէնքն միահաղոյն Երանելւոյն Պետրոսի այս Աթոռոյն հետ սերտիւ համամիտ համաձայնութիւն պէտք է պահէք և ամբապնդէք հաւատոտեալ: Քանզի ամպարիշտ այն օրէնքի հեղինակաց դիտումն է՝ ինչպէս ըսինք, ո՛չ թէ՝ (ինչպէս կ'ուզին ցոյց տալ) Տէրութենէն բաժնել Բորթուգալի Եկեղեցին, զոր կը մերկայենք: ու կը հալածեն, այլ ի Փոխանորդէն Քրիստոսի: Ուստի եթէ մարդոց այսպիսի խորհուրդին և անօրէ-

նութեան ամէն ճգամը և արիութեամբ դիմագրաւելու ըլլաք, պիտի կարենաք Կաթողիկէ Բորթուգալի գործերը դիւրութեամբ կարգադրել ։ . . .

* *

Հովուապետին այս ամուր ձայնը սրտապնդեց և արիացուց հովիւները ։ Անոնք սակայն իրաւունք ունեցեր էին կացութեան վրայ տարակուսական աչօք նայելու ։ Ամենայն ինչ յապականութիւն կը դիմէր ի Բորթուգալ . քաղականութիւն, վարչութիւն, բարոյք . ֆրանսիստներէն կարծես որոգայթադիր ցանցով պատած էր զայն . նոյն իսկ կղերն մէջ պակաս չէին մեղսակցութիւններ ընդհանուր քայքայման գործին ։ Իրաւ է որ լուսամիտ, վեհօգի և սրբակենցաղ ազնիւ եկեղեցականներ շատ կային հոն . բայց սառնց քով կային նաեւ այնպիսիք որ սառնց կոչման մտեր էին ի Սրբութիւն Սրբութեանց, կամ անոր իմաստը կորուսեր էին ։ Կեղ Լուսիտանիան եկեղեցւոյ, կեղ որ հեռուէն կուգար, որմնադրական այն օրէնդորութենէն որ դիտած էր ստրկացնել կղերը և զայն իր չարամիտ դիտումներուն հլու գործիք մը դարձնել ։ Եւ դարձեալ բարիներուն և չարերուն մէջ կը գտնուէր քահանայից դաս մը՝ անգոյն, անգործ, գրեթէ անտարբեր, զուրկ գաղափարականէ ու եռանդէ . կղեր մը որ տանիլի պիտի ըլլար կանոնաւոր և հանդարտ ժամանակաց պայմաններու մէջ, բայց որու մասին իրաւամբ մարդ կրնար կասկածիլ թէ պիտի կարենա՞ր արդեօք դիմագրաւել հալածանքի վայրագութեանց ։

Արդ որմնադրաց աղանդը յոյս դրած էր շատ քահանայից վրայ՝ կազմակերպելու համար հերձեալ եկեղեցի մը և ապա կորզելու նաեւ անտարբերներու խմբակը ։

Իսկ արդ, բոլոր այս սատանայական հաշիւները ի դերեւ հոնեց նախանամութիւնը ։ Ս . Քահանայապետին ձայնին՝ որ հանդիսաւորապէս կը բողոքէր առաջի աշխարհի այնպիսի օրէնքի մը դէմ որ քաղաքային վայրէնութեան պատմութեան մէջ իր նմանը չունէր, այս վեհ ձայնին՝ Բորթուգալցի կղերն համօրէն թօթափեց թմրին ու զտրթեալ ընդատու . գօտեպինդ ձեռնարկեց իւր Հովիւներուն հետ, առաքելական և անվեհեր ընկերներու հետ, մարտնչելու պայքարելու եկեղեցւոյ ապստոլութեան համար, պօգանքով մերժեց պաշտօնական այն հոցը և ամէն շահ, հրապոյր ու խանձ, որոնցմով դիւրացնել կ'ուզուէր իրեն՝ ի քահանայութիւնէ դատալիք անկում ։ Եւ ոչ մի դատալիք գտնուեցաւ, Կաթողիկէ զգացմունքի հրաշալի՝ զօրութիւն ։

Այս պահուս, տարուած բարոյական սկնախտից յաղթանակին առջև հոգեզմայլ, Հռոմ և Կաթողիկէ տիեզերք կ'ուզղեն սրտեւանգն և արժանաւոր դրուատիքներ Բորթուգալի Նաւրապետութեան ու Կղերին: Անոնց ոսոխներն, զիրենք ճնշելէ առաջ, կը մտադրէին ստրկացնել նուառտացընել. անոնք խարեցին, շուարեցուցին, ամօթապարտ թողուցին այս թշնամիները. դուրս գալով, վեր կանգնելով վեհօրէն գերազանց ամէն սպառնալիքներու և ասպականութեան: Յարատե՛ ըլլան. և Կաթողիկեայ Բորթուգալը այս անագորոյն դասէն օգտուած պիտի ըլլայ իր դարաւոր թմբուծիւնը ցնցելու թօթափելու, իր իրաւունքն ու ազատութիւնը վերջնապէս ընդ բռամբ ածելու:

Կաթողիկէ

ԹԵՄԵՐՈՒ ՁԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Օտմանեան Սահմանադրութեան հռամեայ հռչակումէն ի վեր թուրքիոյ զանազան Հասարակութիւններն և ի մասնաւորի հայ ազգիս այլ և այլ հատուածներն փոխանակ մէջերնին համերաշխութիւն գոյացնելու և սահմանադրական Օրինաց շուշլութեան միջոցներով և զիւրութիւններով ձեռք ձեռքի տալով տոհմային յառաջադիմութեան և զարգացման աշխատելու, հետզհետէ տարբեր տարրեր կուտակցութեանց բաժնուելով և Սահմանադրութեան բարերար ազդեցութիւններն և տրամադրութիւններն և նոյն իսկ գոյութիւնն վտանգելով, անտեղի, անիմաստ, և ազգակործան պայքարներ է որ կը մղեն իրարու հանդէպ:

Հայ Կաթ. Հասարակութեան մէջ թէև բաւերազտաբար գոյութիւն չ'ունին նման կուտակցութիւններ՝ զոնէ պաշտօնապէս ճանչցուած. բայց զժրադգաբար մեր մէջն ալ նմանողութեամբ աշխարհականաց դառակարգ մը կամ աւելի ճշտօրէն խօսելու համար ինքնակոչ երեսփոխանական անունը կրող Ժողովոյ մը մէջ գտնուող բառին բովանդակ առումով Anticlerical և հետեաբար անհաւատ և անկրօն խմբակ մը, ըստրովին անտեղեակ Կ. եկեղեցւոյ Աստուածադիր Օրինաց և կարգադրութեանց, նաև գրգռութեամբ և թելադրութեամբ հայ էջմիածնական՝ յամենայնի ղինքն ձեռնհաս կարծող վճռարեկ մամուլին թիւր և դատապարտելի սկզբանց, ենթադրեալ և կարծեցեալ իրաւանց վրայ յենլով, ոչ պատուարներ եւ ոչ ալ մազնաչափ օգտակարութիւն ունեցող, այլ ըստ ամենայնի աղետարեր եւ վնասակար

պայքար մըն է որ ամիսներէ ի վեր մղել կը շարունակեն տակաւին իւր տարի մը առաջ իրաւամբ ովաննաներով բարձրացուցած եւ արժանապէս գովարանած Ամեն. Կաթող. Պատրիարքին եւ հետեւապէս Օրինաւոր Իշխանութեան դէմ:

Ենթադրեալ եւ կարծեցեալ իրաւունքներ քսինք. ձեռանհաս եւ օրինաւոր իշխանութիւններէ ընդունուած եւ հաստատուած կանոնադրութիւն մը. եւ անկէ զօրութիւն եւ իշխանութիւն ստացող օրէնսդիր երեսփոխանական ժողովոյ մը գոյութիւն եւ իրաւունքները կը քարոզուին մինչդեռ ձեռնհաս եւ ոչ մի իշխանութենէ ընդունուած եւ ճանչցուած են թէ այդ կանոնադրութիւնը, եւ թէ անկէ զօրութիւն առնող երեսփոխանական ըսուած ժողովը: Հոգեւոր Գերագոյն իշխանութիւնն Սրբոյ Գահին Հռովմայ բնաւ չէ ընդունած եւ հաստատած այդ կանոնադրութիւնն որուն բացայայտ եւ անժխտելի ապացոյցներն կ'աղաղակին կաթողիկոսարանի Դիւանին մէջէն, տարիներով երջանկայիշատակ Ազարեան Կաթ. Պատրիարքին եւ Ս. Ժողովոյ գահերէց հոգեւոր Սիմէոնի Կարդինալին միջեւ տեղի ունեցած բանակցութիւններն, կանոնադրի շատ մը յօդուածներն յականէ յանուանէ դատապարտուիր, եւ հուսկ յետոյ անոր հաստատութեան բացարձակ մերժումն որոց, մօտէն եւ անձնապէս տեղեակ ենք առանձին ուսումնասիրութեամբ:

Բաց ի հոգեւոր իշխանութենէն, քաղաքական օրինաւոր իշխանութիւնն ալ, այս է Օսմ. Պետութիւնն եւ չէ ընդունած եւ չէ ճանչցած բնաւ խընդրոց տաւրկայ եղող կանոնադրութիւնն, եւ անոր զօրութեամբ կազմուող երեսփոխանական ըսուած ժողովը: Օսմ. Պետութեան, կամ բարձրագոյն Դրան ճանչցածը՝ մի միայն բարեյիշատակ Հասուն Կաթողիկոս Պատրիարքին Օրինաց կարգն անցած Պեքաքն է, որուն սկզբանց համաձայն գրուած ըլլալն կը հաստատէ նախարարական քեզներէն կանոնադրին սկիզբը տրուած Ազարեան կաթողիկոսին Գ կէտերէ բազկացած պատրիարքական քազդիրն, որոյ վրայ սրբաւրութիւններ ալ եղած են յաջորդ թագրիրով մը: Ըսածնիս աւելի հաստատելու համար աւելորդ թող չըլլայ հոս յիշել միջադէպ մը շուրջ տարի մը առաջ տեղի ունեցած արդի գոտական եւ կրօնից նախարար Վեհմ. Նէճմէտտին Պիլին եւ զայս ստորագրող Եպ.սին թեմական գործոյ մը կարգադրութեան շարժառիթով կատարուած տեսակցութեան մը առթիւ: Կաթողիկոսական ծանօթ ընտրութեան ձգձըգումնաւոր ապտճառաւ, պատեհութիւնն ներկայանալով խնդրեցինք նախարարէն, որ ժողովոյ գլխաւոր անդամներէն մէկ քանիները իւր մօտ հրաւիրելով,

զիրենք յորդորէր օր մը առաջ վերջ տալու Կ. Պատրիարքին ընտրութեան . ահա թէ ինչ եղաւ նախարարին պատասխանը : « Մենք պաշտօնպէս այդպիսի ժողով մը ղեկնք ճանչնար , ուստի և աւելորդ կը համարենք այդպիսի միջամտութիւն մը ընելու » , ինչ որ շատ իրաւացի էր :

Ուստի մենք իբր հայ Կաթողիկէ Եպիսկոպոս մը . իրենց կրօնքը , Եկեղեցին և Հասարակութիւնը սիրող թէ՛ Մայրաքաղաքին և թէ՛ գաւառաց մէջ գտնուող համօրէն հայ Կաթողիկէները ոչ իբր հակառակորդ և թշնամի , այլ իբր հայր զորդի կը յորդորենք զիրենք , քան թէ ինքնատեղծ և ինքնատուր հեղինակութեամբ իրենք զիրենք օժտելու և անօգուտ պայքարներ մղելու . միայն թէ հոգեւոր և քաղաքական օրինաւոր կրկնակ իշխանութիւններն ներկայացնող իրենց Կ. Պատրիարքին և Առաջնորդ Եպիսկոպոսաց շուրջը թող բոլորին մէկ սիրտ և մէկ հոգի գործելու հասարակութեան օգտին բարւոյն և զարգացման համար :

Հայ Կաթողիկէ Եպիսկոպոս մը

Կ. ՊԱՏՐԻԱՐԷԱԿԱՆ ՍԻՆԱՆՈՒՍ Ի ՀՈՌՎՈՐ

Կը փութամք մեծաւ ուրախութեամբ աւետելու , որ՝ ըստ փափաքանաց Ամեն . Հոգեւոր Տեառն և բարձր ու բարեացակամ հաւանութեամբ Ս. Քահանայապետին՝ Պիոսի Ժ. Ի , Պատրիարքական Սինոդոսս պիտի գումարուի ի Հոռոմ , յեկեղեցւոյ Ս. Նիկողայոսի՝ Ք. Հայ Դպրոցին , ի 13 Հոկտ. Ն. Տ. 1911 , Կիրակի օրը : Պաշտօնական հրաւերի Կաթողիկոսական Կոնգակներն արդէն զրկուած են Եպիսկոպոսաց , ինչպէս նաև մասնաւոր Շրջաբերականներ առ Քահանայս ու առ ժողովուրդն , որպէսպի Սինոդոսին բարեւելին համար աղօթեն առ Աստուած :

Մեր նախնիք՝ Սրբազան Հայրապետք , իրենց Պատուիրակները զրկելով ի Սեանս Առաքելոց և Քրիստոսի Փոխանորդին հրամաններն ընդունելով՝ երջանիկ կը համարէին զիրենք . որպիսի՝ ուրեմն անզուգական շնորհք մը և փառք ու պատիւ է Հասարակութեանս՝ Պատրիարքական Սինոդոսս գումարել ի Յաւիտենական Քաղաքին :

Հետեւաբար « Կաթողիկէ Արձագանգ » պիտի չթերանայ այսքան աննախընթաց դէպքի մը լուրերը տալու իւր ընթերցողաց կանոնաւորապէս և մանրամասնութեամբ :

Փ . Պիսակի

Տնօրէն Պատասխանապու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխան առ դիտող	էջ 131
Բորքուզալի Եպիսկոպոսաց Բողոքը	» 137
Թեմերու Զայնակցութիւն Կաթողիկոսական Տրանսպրոքեանց	» 140
Կ . Պատրիարքական Սինոդոսս ի Հոռով	» 142

